«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԱՌԱՐԿԱ՝ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՀԵՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Հայաստանի Հանրապետության տարածքային աճը 1918 - 1920թթ.-ին 6

Հայտարարություն 9

Գլուխ 2. Բաթումիի պայմանագիրը 11

Գլուխ 3. Բաթումիի պայմանագրի գնահատականը 15

ժամանակակիցների կողմից 15

Եզրակացություն 17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19

Ներածություն

Ինչպես գիտենք, Հայաստանի առաջին հանրապետությունն առաջացավ պատմական մի բարդ ժամանակահատվածում:

Այդ շրջանում աշխարհը գտնվում էր Առաջին համաշխարհային պատերազմի մեջ: Հենց այս շրջանում էլ Թիֆլիսում գործող Հայոց ազգային խորհուրդն որոշում է հռչակել Հայաստանի անկախությունն:

Սրան նախորդող իրադարձությունների մեջ Անդրկովկասյան Սեյմի լուծարումով Վրաստանն 5 ժամ անց արդեն լուծարված Սեյմի դահլիճում հռչակեց իր անկախությունն (մայիսի 26), հաջորդ օրն (մայիսի 27-ին) հայտարարվեց Արևելակովկասյան մուսուլմանական Հանրապետության (ԱԿՄՀ) անկախությունն: Մայիսի 28-ին Թիֆլիսում Հայոց Ազգային խորհուրդն վճռեց հռչակել Հայաստանի անկախությունն: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի շրջադարձային իրողություններից ամենաուշագրավը, ավելի քան 600 տարվա ընդմիջումից հետո, հայոց ութերորդ պետության կերտումն էր 1918 թվականին: Նրա մասին նույնպես հայ ժողովուրդը առասպելներ,ասքեր ու երգեր է հորինել: Փաստ է, որ 20-րդ դարում կերտված հայոց երեք հանրապետությունների ծնունդն ու քաղաքական կարգավիճակի փոփոխություններն անմիջականորեն կապված են եղել ռուսական կայսրության մակընթացությունների ու տեղատվությունների հետ: Հենց առաջին տեղատվության ակնթարթում ծնվեց հայոց առաջին հանրապետությունը:

Հարյուրամյակների ընդմիջումից հետո կրկին վերականգնվեց հայոց անկախ պետականությունը: Հայաստանի անկախության հռչակումը, իրավամբ, շրջադարձ եղավ հայ ժողովրդի քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքում: Դրանով կարելի է ասել, որ փակվում է հայ ժողովրդի ողբերգական և հերոսական դրվագներով հարուստ նոր պատմության ժամանակաշրջանն ու սկսվում նորագույն՝ հայկական պետականությունների պատմության դարաշրջանը:

Նման անկախությունը մեծ դժգոհություններ է առաջացնում Օսմանյան կայսրությունում, ինչի հետևանք է հանդիսանում Բաթումի պայմանագիրը կնքված 1918թ, որը,

այսպես կոչված հաշտության և բարեկամության պայմանագիր էր Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև: Թուրքիայի կառավարության անունից պայմանագիրը ստորագրել են Խալիլ բեյը, Վեհիբ Մեհմեդ փաշան, Հայաստանի

Հանրապետության կառավարության անունից Ալեքսանդր Խատիսյանը, Հովհաննես Քաջազնունին, Մ.Պապաջանովը: Պայմանագիրը պարտադրված ակտ էր ռազմական գերակշռություն ունեցող Թուրքիայի կողմից,

և ստորագրվել է Անդրկովկասում թուրքերի հարձակման պայմաններում:

Օսմանյան կայսերական կառավարությունը մի կողմից և իրեն անկախ հռչակած Հայաստանի Հանրապետության կառավարությունը մյուս կողմից, փոխադարձաբար համաձայնվելով երկու կողմերի միջև հաստատել բարեկամական, բարիդրացիական հարաբերություններ քաղաքական, իրավաբանական, տնտեսական և մտավոր բնագավառներում, ՀՀ-ում իրենց լիազորներ է նշանակում: Իրավիճակը փոխվում է Առաջին Համաշխարհայինից հետո,քանի որ Առաջին Համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրությունն գլխովին ջախջախվեց և ի վերջո կանգնեց փլուզման վտանգի առջև:

Պարտված Օսմանյան Թուրքիան դարձել էր Անտանտի խամաճիկը:

Ինչպես արդեն գիտենք, 1918թ. Հունիսի 4-ին Թուրքիայի հետ Բաթումում հաշտություն կնքելուց հետո Հայաստանի Հանրապետությունը հայտնվել էր արտաքին ու ներքին չափազանց ծանր դրության մեջ: Ընդամենը 12 հազ. քառ. կմ տարածք, թուրք-թաթարական շրջափակում, հարյուր հազարավոր գաղթականություն և այլն:

1918թ. ամռանը Հայաստանի պատվիրակությունը (նախագահ Ա. Ահարոնյան) փորձ արեց բանակցել Քառյակ միության երկրների (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, Բուլղարիա) հետ Բաթումի պայմանագիրը փոքր-ինչ մեղմելու նպատակով, բայց արդյունքի չհասավ:

Քանի դեռ շարունակվում էր աշխարհամարտը, Անդրկովկասում տերուտնօրինություն էին անում Քառյակ միության երկրներից Գերմանիան և Թուրքիան: Նրանք նույնիսկ մրցակցում էին իրար հետ, թե տարածաշրջանում ով ավելի մեծ ազդեցություն կնվաճի: Նրանց համար մեծ գրավչություն ուներ ադրբեջանական նավթը: Հայաստանը իրավունք չուներ հարաբերվել այլ պետությունների և հատկապես Անտանտի երկրների ու Ռուսաստանի հետ:

Այս վիճակը շարունակվեց մինչև 1918թ. վերջերը Առաջին աշխարհամարտի ավարտը: Անտանտը հաղթեց Քառյակ դաշինքին: Պարտված Գերմանիան և Թուրքիան իրենց զորքերը դուրս բերեցին Անդրկովկասից:

Այժմ արդեն տարածաշրջանում ազդեցիկ դիրք գրավեց Անտանտի երկրներից Անգլիան: Աշխարհամարտի ավարտից հետո Հայաստանի արտաքին քաղաքական վիճակը փոքր –ինչ բարելավվեց, և նա սկսեց ավելի ակտիվ արտաքին քաղաքականություն վարել:

Անտանտը Օսմանյան կայսրության տարածքը բաժանել էր իր մեջ և հաշտության պայմանագրով լուծում էր ստանալու նաև Հայկական Հարցը: 1920թ. օգոստոսի 10-ին Սևրում (Փարիզի մոտ), Թուրքիայի սուլթանական կառավարության և 1914-18թթ առաջին համաշխարհային պատերազմում հաղթած դաշնակից պետությունների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Բելգիա,Հունաստան, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Հայաստան, Չեխոսլովակիա, Սերբերի,խորվաթների և սլովենների թագավորություն, Հեջազ) միջև: Հայաստանի Հանրապետության անունից պայմանագիրը ստորագրել է Ավետիս Ահարոնյանը:

Ներքոնշյալ աշխատանքում մանրամասն կներկայացվի Բաթումիի և Սևրի պայմանագրերի

ազդեցությունները Հայկական հարցի վրա:

Գլուխ 1. Հայաստանի Հանրապետության տարածքային աճը 1918 - 1920թթ.-ին

Հայ ժողովուրդը հազարամյակների պատմության ընթացքում իր ինքնությունը պահպանելու համար հարկադրված է եղել ընդդիմանա արևմուտքից և արևելքից իրեն շրջապատող հզոր տերությունների հարձակումներին: Փոխվել են աշխարհակալ հարևան պետությունները, բայց անփոփոխ են մնացել Հայաստանը գրավելու, իրենց միաձուլելու նրանց նկրտումները՝ ձգտումները:

Անհավասար այդ պայքարում հայ ժողովուրդը հաճախ զրկվել է անկախ պետականությունից, բայց կարողացել է գոյատևել, պահպանել իր ազգային նկարագիրը:

Կորցրել է պետականությունը, սակայն երբեք չի համակերպվել այդ վիճակի հետ,

մշտապես մաքառել է պետականությունը վերականգնելուհամար: Ավելին,

այն վերականգնելու ձգտումը այնքան զորեղ է եղել և այն աստիճան է համակե ստեղծագործ ու հայրենասեր հայ ժողովրդին, որ փայ փայել է անկախ պետություն ունենալու ցանկությունը:

Ազգային պետությունը վերականգնելու ձգտումը չխամրեց նաև 20-րդ. դարի 1- ին կեսերին:

1900-ական թթ -ին հայ ժողովուրդը սկսել է իր պայքարը թուրքական զավթիչների դեմ: Հայաստանը հայտնվել էր մեծ տերությունների և հատկապես Թուրքիայի մեծ տարածքներ նվաճելու պայքարում: Հայաստանի կյանքում մեծ դեր է խաղացել նաև Ռուսաստանը: Աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետության տարածքային աճին 1918, 1919 և 1920թթ.-ին: Այս թեման կարևորվում է այնքանով, որ փորձ է արվում ցույց տալ տվյալ թվականն Հայաստանի դրությունը միջազգայ ին հարաբերությունների հորձանուտում, դրա տեղն ու դերը աշխարհում: Թեման գրելիս օգտագործվել են տարատեսակ նյութեր: Աշխատանքում տեղ են գտել հայ վրացական, հայ – թուրքական պայամանագրերի լուսաբանում: Անդրկովկասի անկախության հռչակումից հետո (1918թ. ապրիլի 22) Ե. Գեգեչկորին հրաժարական տվեց և կազմվեց նոր կառավարություն՝ Ա.Չխենկելիի գլխավորությամբ:

Սեյմը որոշել էր թուրքերի հետ Տրապիզոնում ընդհատված հաշտության բանակցությունները շարունակել Բաթումում:

Բաթումի հաշտության կոնֆերանսին մասնակցելու համար կազմվեց Անդրկովկասյան նոր պատվիրակություն հետևյալ կազմով. Ա. Չխենկելի՝ նախագահ, Ն. Նիկոլաձե, Ա. Խատիսյան, Հ. Քաջազնունի, Մ. Հաջինսկի, Խան-Խոյսկի: Գեներալ Գ. Ղորղանյանը,

Ս. Վրացյանը և ուրիշներ նշանակվեցին խորհրդականներ:

Բաթումի կոնֆերանսի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1918 թվականի մայիսի 11-ին: Թուրքերի կողմից կոնֆերանսին մասնակցում էին Խալիլ բեյը, Վեհիբ փաշան և ուրիշներ, Գերմանիայի կողմից՝ գեներալ Ֆոն Լոսովը և ուրիշներ: Նախագահում էր Խալիլ բեյը:

Ա. Չխենկելին առաջարկեց իբրև բանակցությունների հիմք ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, սակայն Խալիլ բեյը վճռականորեն մերժեց այդ առաջարկը, պատճառաբանելով, որ Տրապիզոնի բանակցությունների խզումից հետո նոր դեպքեր են տեղի ունեցել՝ պատերազմ է եղել Թուրքիայի և Անդրկովկասի միջև, արյուն է հոսել, ուստի այլևս անկարելի է գոհանալ Տրապիզոնում ներկայացված պայմաններով: Այնուհետև Խալիլ բեյը Չխենկելիին հանձնեց մի կնքված ծրար, որի մեջ էր Թուրքիայի և Անդրկովկասի հանրապետության միջև կնքված հաշտության պայմանագրի նոր նախագիծը:

Դրանով էլ Բաթումի խորհրդաժողովի առաջին ու վերջին նիստն ավարտվեց:

Ներկայացված նախագիծը բաղկացած էր 12 հոդվածներից, 3 հավելվածներից և սարսափելի ծանր պայմաններ էր պարունակում ամբողջ Անդրկովկի Վրաստանի և մանավանդ, Հայաստանի համար:

Վրաստանից գրավվում էր Բաթումի շրջանը՝ նավահանգիստով, Ախալցխայի գավառը: Հայաստանից խլվում էին Ալեքսանդրապոլը, Ախալքալաքը, Շիրակը, Էջմիածնի գավառների մեծ մասը, Սուրմալուն, Ալեքսանդրապոլ-Կարս և Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին: Հայաստանը փաստորեն չէր մնում, հայերին թողնվում էր հազիվ 11.000 քառակուսի վերստին լեռնոտ տարածություն Արագածի և Սևանա լճի միջև: Հողային պայմաններին զատ դրվում էին և չափազանց ծանր տնտեսական, առևտրական, ռազմագիտական և այլ պահանջներ:

Հայ ժողովրդի մղած Մայիսյան հերոսամարտերից հետո պարզ դարձավ, որ Անդրկովկասը արագ քայլերով գնում էր դեպի քայքայում, որովհետև օրեցօր սաստկանում էին հակամարտությունները վրացիների, ադրբեջանցիների ու հայերի միջև:

Վրացիները որոնում էին գերմանացիների հովանավորությունը և գաղտնի բանակցություններ էին վարում նրանց հետ դեռևս Տրապիզոնում, ադրբեջանցիները բռնել էին թուրքամետության ուղին և տանում էին նրանց դեպի Բաքու, որն այդ օրերին բոլշևիկների ձեռքին էր:

Հայերը մնացել էին մենակ և օրհասական կռիվ էին մղում առաջ շարժվող թուրքական զորքերի դեմ:

1918 թվականի մայիսի 26-ին Բաթումում Խալիլ բեյը Չխենկելուն հանձնեց վերջնագիր, որով պահանջվում էր 72 ժամվա ընթացքում պատասխանել երկու շաբաթ առաջ իրենց ներկայացրած հաշտության նախագիծն ընդունելու կամ չընդունելու մասին: Նույն օրը՝ 1918 թվականի մայիսի 26-ին, Թիֆլիսում գումարվեց Սեյմի վերջին, ողբերգական նիստը, որը վրացիների պնդմամբ ընդունեց հետևյալ բանաձևը.

Նկատի ունենալով, որ պատերազմի և խաղաղության խնդրումեր և անեկան հիմնական տարակարծություններ Անդրկովկասի անկախ հանրապետությունը կամ զողազգերի միջև, որով անհնար է դառնում ամբողջ Անդրկովկասի համար մի հեղինակավոր իշխանության գոյությունը, Սեյմը արձանագրում է Անդրկովկասի քայքայման փաստը և հայտարարում չեղյալ իր լիազորությունները:

1918 թվականի մայիսի 26-ին կեսօրին Սեյմը ցրվեց, իսկ հինգ ժամ անց, նույն սրահում գումարվեց Վրաց ազգային խորհրդի նիստը՝ Նոյ Ժորդանիայի նախագահությամբ, որը հանդիսավորապես հռչակեց Վրաստանի անկախությունը:

Վրացիների վարմունքը սարսափելի կացություն ստեղծեց հայերի համար և առաջացրեց նրանց անսահման վրդովմունքը: Հայերը, ոչ առանց հիմքի, նենգ դավադրություն ու դավաճանություն էին տեսնում վրացիների վարմունքի մեջ: Նրանք զգում էին, որ վատ խաղ են խաղացվել իրենց գլխին: Նույնիսկ նույն օրը՝ մայիսի 26-ի երեկոյան, Հայոց Ազգային խորհուրդը բուռն վիճաբանություններից հետո ձայների ճնշող մեծամասնությամբ որոշեց բողոքել Վրաստանի անկախության դեմ, սակայն դեպքերի հետագա զարգացման հետևանքով այդ որոշումը չգործադրվեց:

Այդ օրերին հայ գործիչների մեջ միաձայնություն չկար: Ա. Ահարոնյանը, Ստ. Մամիկոնյանը, Տ. Բեկզադյանը, Ա.Բաբայանը, Ռ. Տեր Մինասյանը և էս. Էռները վճռականորեն դեմ էին անկախությանը: Խ. Կարճիկյանը, Ս. Հարությունյանը, Ավ. Շահխաթունյանը, Ս. Վրացյանը, Ա. Երզնկյան, մենշևիկները կողմնակից էին շուտափույ թ կերպով Հայաստանի անկախությունը հայտարարելու Այդ հարցում վճռական խոսք ասաց ՀՀԴ -ն: Մայիսի 26- ի երեկոյ ան տեղի ունեցավ ՀՀԴ Թիֆլիսի կոմիտեի արտակարգ նիստը, որն անհրաժեշտ գտավ, որ Հայոց Ազգային խորհուրդը, ուժեղացնելով իր կազմը, ստանձնեց իր կառավարման ֆունկցիաներ:

1918 թվականին մայիսի 27-ին Ադրբեջանի ազգային խորհուրդը հայտարարեց Ադրբեջանի անկախությունը:

Անկախության հայտարարության վրա պնդում էին նաև Բաթումից վերադարձած հայ ներկայացուցիչները՝ Հ. Քաջազնունին, Ա. Խատիսյանը, Մ. Պապաջանյանը,

որոնք մայիսի 27-ի երեկոյան մանրամասնորեն զեկուցեցին բանակցությունների ընթացքի և ստեղծված իրավիճակի մասին: Հաջորդ օրը՝ 1918 թվականի մայիսի 28-ին Հայոց Ազգային խորհուրդը որոշեց Բաթում ուղարկել հայկական պատվիրակությունը (Հ. Քաջազնունին, Ա. Խատիսյանը, Մ.Պապաջանյանը), տալով նրան անկախ Հայաստանի անունից թուրքերի հետ բանակցելու և հաշտություն կնքելու բացարձակ լիազորություն: Իսկ Հայաստանի անկախության հայտարարությունը, ինչպես Ս.Վրացյանն է նշում՝ եղել է ավելի ուշ՝ մայիսի 30-ին, ավելի արտաքին ճնշումների տակ, քան Ազգային խորհրդի հոժար կամքով:

Մայիսի 29-ին գումարվեց ՀՀԴ Արևելյան և Արևմտյան բյուրոների, ՀՀԴ Թիֆլիսի Կենտրոնական կոմիտեի, Սեյմի ու Ազգային խորհրդի դաշնակցական ներկայացուցիչների միացյալ նիստը, որտեղ որոշվեց Հայաստանը հայտարարել անկախ հանրապետություն, կազմել կառավարություն միջկուսակցական հիմունքներով՝ մինչև օրենսդրական ժողովի գումարումը:

Որոշվեց նաև Ազգային խորհուրդն ու կառավարությունը տեղափոխել Երևան, որը պիտի դառնար Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը:

Այդ ժողովից հետո 1918թ. Մայիսի 30-ին Հայոց Ազգային խորհուրդը հրապարակեց հետևյալ հայտարարությունը, որն, թեև իսկական առումով անկախության հռչակում չէր, բայց դեպքերի բերումով դարձավ այդպիսին:

Հայտարարություն

<<Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշեց ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարություն:

Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունցկիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար:

Հայոց Ազգային խորհուրդ, 1918թ. Մայիսի 30, Թիֆլիս>>: Այս բանաձևի հեղինակը Նիկոլ Աղբալյանն էր: Այսպիսով՝Հայաստանի անկախության հայտարարության օրը իսկապես պետք է համարվի մայիսի 30-ը, սակայն, հակառակ դրան, համարվում է մայիսի 28-ը, այսինքն՝ այն օրը, երբ Ազգային խորհուրդը որոշեց հայկական պատվիրակություն ուղարկել Բաթում, իսկ հաշտության բանակցություններ վարելու թուրքերի նախապայմանը

անկախության հայտարարությունն էր, ուստի այդ օրն էլ կարող է համարվել անկախության սկզբնավորության օր:

Այսպես թե այնպես, Հայաստանի Հանրապետության ծագման օրը եղավ մայիսի 28-ը: Այդ օրը դարձավ նվիրական հայ ժողովրդի համար, մտավ ազգային տոնացույցի մեջ, իբրև սրբազան օրերից մեկը:

Մեր պատմության այդ ծանրագույն ժամանակաշջանը միաժամանակ ազգային իղձերի իրականացմա նժամանակաշրջան էր:

Հինգ դարից ավելի կորցրած պետականության վերականգնումը մեր հինավուրց ժողովրդի դարավոր բաղձանքն էր, որն իրականացավ համառ պայքարով, անթիվ զոհերով ու զրկանքներով:

Հայկական պետական վերականգնումը հայ ժողովրդի մեծագույն հաղթանակնէր, բեկումնային իրադարձությունննով կյանքում, բազմադարյան պատմության մեջ:

Գլուխ 2. Բաթումիի պայմանագիրը

Հայաստանի պետականության վերականգնման և Հայաստանի Հանրապետության ստեղծման փաստը ի լուր ամբողջ աշխարհի հայտնել են Հայոց Ազգային խորհրդ ինախագահ Ա.Ահարոնյանը, վարչապետ Հ. Քաջազնունին, արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանը՝ հետևյալ հակիրճ ու հստակ ծանուցմամբ.

<<Անդրկովկասյան հանրապետության կազմալուծումից հետո Հայոց Ազգային խորհուրհդը, այն իրավունքների հիման վրա, որով նրան լիազորել է հայ ժողովուրդը, 1918 թվականի մայիսի 28-ին որոշվեց հռչակել հայկական պետության անկախությունը, հիմնեց Հայկական ժողովրդավարական Հանրապետություն>>:

Հայոց ազգային խորհրդի պատվիրակներ Ա. Խատիսյանը (պատվիրակության նախագահ), Հ. Քաջազնունին և Մ. Պապաջանյանը Բաթում հասան 1918 թ. մայիսի 30-ին և նույն օրն էլ, երեկոյան ժամը 5-ին, սկսվեցին բանակցություններ հայկական և օսմանյան պատվիրակությունների միջև: Մի շարք նիստերից հետո կողմերը եկան համաձայնության և 1918թ. հունիսի 4-ին ստորագրվեց Հաշտության և բարեկամության պայմանագիր Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև,երեք հավելվածներ, որոնք վերաբերում էին տրանզիտին, սահմանակից շրջաններում առևտրին, կրոնական ազատություններին և մեկ համաձայնագիր՝ երկաթուղային գույքի բաշխման մասին:

Թուրքական կողմից այն ստորագրեցին պետական խորհրդի նախագահ Խալիլ բեյը և Կովկասյան ռազմաճակատի օսմանյան զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Վեհիբ Մահմեդ փաշան, հայկական կողմից՝ Ա. Խատիսյանը, Հ. Քաջազնունին և Մ. Պապաջանյանը: Դա առաջին միջազգային փաստաթուղթն էր, որ ստորագրում էին անկախ ՀՀ ներկայացուցիչները:

Բաթումի հիմնական դաշնագիրը բաղկացած էր 14 հոդվածներից:

- ✓ Առաջին հոդվածն արձանագրում էր, որ Օսմանյան կայսերական կառավարության և ՀՀ կառավարության միջև հաստատվում է հաշտություն և մշտական բարեկամություն:
- ✓ Երկրորդ հոդվածը գծում էր հայ-թուրքական սահմանը:
- ✓ Թուրքիային էին անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի տարածքի զգալի մասը՝ Շարուր-Դարալագյազը, Նախիջևանը, Սուրմալուն, Կարսը, Կաղզվանը, Սարիղամիշը, Ախալքալաքը, Լոռին: Հայաստանը բաղկացած էր լինելու Նոր Բայազետի գավառից, Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառներից մի մասից՝ ընդամենը 9.000

քառակուսի (մոտ 11.000 քառակուսի կիլոմետր) տարածություն: Պետական սահմանն անցնում էր Երևանից 7 կիլոմետր հեռավորության վրա: Թուրքիան հայերին էր հատկացնում ամբողջ Անդրկովկասի տարածքի 5 տոկոսը, որտեղ բնակվում էր ընդամենը 310 հազարմարդ, որից էլ հայեր՝ 230 հազար: Մինչդեռ Վրաստանին տրվում էր երկրամասի տարածքի 33 տոկոսը՝ 61.000 կմ քառակուսի, Ադրբեջանին՝ 38 տոկոս՝ 70.000 կմ քառակուսի: Հայերը պահանջում էին 54.5հազար կմ քառակուսի, որը 29 տոկոսն էր, բայց ստացան 5 տոկոս: Կովկասահայության ճնշողմասը՝ 1 միլիոն 200 հազարմարդ,բնակվելու էին ՀՀ սահմաններից դուրս: Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Բրենսդորֆի արտահայտությամբ՝ <<Թուրքերը հայ երին տեղ տվեցին Սևանում լողալու համար, բայց դուրս գալու՝չորանալու համար, տեղ չտվեցին>>:

Ստորագրված հավելվածներով թուրքական զորքերն իրավունք էին ստանում անարգել անցնել Հայաստանի տարածքով, օգտվել Ղարաքիլիսա-Ղազախխճուղուց՝ զորամասեր և ռազմամթերք փոխադրելու համար:

Թուրքիան համաձայնեց ինքնիշխան Հայաստանի գոյությանը այն հաշվով, որ տնտեսապես թույլ և չնչին տարածք ունեցող Հայաստանը չի կարող վտանգ սպառնա Թուրքիային, իսկ հեռանկարում նրանք տեսնում էին այդ Հայաստանի վերացումը:

- ✓ Երրորդ հոդվածը նախատեսում էր, որ հայ-ադրբեջանական սահմանի վերաբերյալ համաձայնագրի մասին պիտի հաղորդվի օսմանյան կառավարությանը:
- ✓ Չորրորդ հոդվածով օսմանյան կառավարությունը պարտավորում էր զենք իուժով օգնութուն ցույց տալ ՀՀ կառավարությանը այն դեպքում, եթե վերջինս այդ օգնությունը խնդրեր՝ երկրում կարգն ու հանգստությունը ապահովելուհամար:
- ✓ Հատուկ ուշադրության է արժանի հինգերորդ հոդվածը, որով ՀՀ կառավարությունը պարտավորվում էր գործուն կերպով հակազդել, որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի և չգինվի իր տարածքում, ինչպես և զինաթափել ու ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ:

Խոսքն այստեղ վերաբերում էր Անդրանիկի զորամասին և գոյություն ունեցող ֆիդայական խմբերին:

Հատկանշական է, որ այդ հոդվածի հիշատակում Ս. Վրացյանի մոտ բացակայում է:

- ✓ Վեցերորդ հոդվածում խոսվում էր ՀՀ-ում բնակվող մուսուլմանների կրոնը հարգելու մասին,
- ✓ Յոթերորդ հոդվածը վերաբերում էր հյուպատոսական կոնվենցիային,
- ✓ ՈՒթերորդը՝ երկաթուղային տարիֆներին, իններորդը՝ փոստային և հեռագրական կապին, տասներորդը՝ կողմերի քաղաքացիների անշարժ գույքի տնօրինմանը:

- ✓ Ուշագրավ է տասնմեկերորդ հոդվածը, ըստ որի, ՀՀ կառավարությունը պարտավորվում էր գործադրել բոլոր ջանքերը՝որպեսզի Բաքու քաղաքից անհապաղ էվակուացվեն այնտեղ գտնվող բոլոր հայկական զինվորական ուժերը:
- ✓ Տասներկուերորդ հոդվածով կողմերը պայմանավորվում էին ուժի մեջ թողնել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի դրույթները, տասներեքերորդը վերաբերում էր զորքերի էվակուացիային,
- ✓ իսկ վերջին՝ տասնչորսերորդ հոդվածը նախատեսում էր պայմանագիրը փոխադարձաբար վավերացնել մեկ ամսվա ընթացքում:

Բաթում պայմանագրի մասին Ս. Վրացյանն իր խոսքն ավարտում է այսպես՝ վերջնահաշվարկը, հավանաբար, թողնելով ընթերցողին. <<Այսպես,-գրում է նա,-ըստ Բաթումի դաշնագրի, Հայաստանը դառնում էր անկախ պետություն: Ահուդողով մտնում էր նա ինքնիշխան ազգերի համակեցության մեջ, իբրև ազատ անձնավորություն միջազգային իրավունքի:

Նրա հողի տարածությունը մոտավորապես 12.000 քառակուսի կիլոմետր էր, բնակչության թիվը գաղթականներով միասին՝մոտ մեկ միլիոն: Եվ մայրաքաղաքից յոթ կիլոմետր հեռու երևում էին թուրքական թնդանոթները...>>: Բաթումի պայմանագիրը ոչ թե թուրքական «գթասրտության» արդյունք էր, նրանց «պարգևն էր» հայերին,ինչպես փորձում էին ներկայացնել Կարաբեքիրը, Վեհիբը և ուրիշներ, այլ թուրքական քաղաքականության շրջադարձի պատճառը,ինչպես երևում է Խալիլ բեյի, նույն Վեհիբ փաշայի և Շևքի փաշայի ակամա խոստովանանքներից, Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի տակ հայերի հերոսամարտերն էին: Դեռևս 1920 թ. Ապրիլի 20-ին, ժխտելով Հայաստանի անկախությունը թուրքական շնորհ համարելու մտայնությունը, Համո Օհանջանյանը հայտարարել է. «Իր անկախությունը պաշտպանելու պատրաստակամությունը հայ ժողովուրդը ապացուցել է Սարիղամիշի, Սարդարապատի, Ղարաքիլիսայի և այլ մարտերում, ուր Հայաստանի հազարավոր զավակներ զոհվեցին այդ անկախության համար...

Հայ ժողովուրդը իր այս զոհերով ստեղծեց անկախ և ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը»: Ավելացնենք նաև, որ Ղարաքիլիսայի հերոսամարտում զոհվել էր

Հ. Օհանջանյանի ավագ որդին՝ Մոնիկը: Բաթումի պայմանագրով Անդրկովկասից Թուրքիային բռնակցվեց 38 հազար քառակուսի տարածք, որը պոկված էր Հայաստանից և Վրաստանի հայաբնակվայրերից: Այդ տարածքը 12.5 հազար քառակուսի կիլոմետրով ավելին էր այն տարածքից, որ թուրքերը զավթել էին Բրեստի դաշնագրով:

Սակայն Բաթումի թալանչիական պայմանագիրը կարճատև գոյություն ունեցավ: 1918 թվականին Մուդրոսի զինադադարով Օսմանյան կայսրությունը ճանաչեց իր անվերապահ պարտությունը Առաջին համաշխարհային պատերազմում, և դեկտեմբերի սկզբին թուրքական զորքերը հեռացան Անդրկովկասից, իսկ Կարսի մարզը դատարակեցին 1919 թվականի ապրիլին:

Բաթումի պայմանագիր

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանց

Գլուխ 3. Բաթումիի պայմանագրի գնահատականը ժամանակակիցների կողմից

Պայմանագրի կնքումից անցել է 104 տարի, սակայն ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա չեն դադարում քննարկել այսպես կոչված «խաղաղության և բարեկամության» պայմանագրի կնքման անհրաժեշտությունը, մանավանդ, որ հայ ժողովուրդը կերտել էր փառահեղ հաղթանակներ մայիսյան հերոսամարտերում:

Ինչպես արդեն ասվեց, պայմանագրի հինգերորդ հոդվածը նախատեսում էր կազմալուծել ՀՀ տարածքում գտնվող կամավոր հայդուկային խմբերը: Զորավար Անդրանիկը մերժեց ճանաչել Բաթումի ստրկացուցիչ «դաժան» դաշինքը, ինչը և մի շարք այլ տարաձայնություններ կապված կառավարության հետ պատճառ հանդիսացան Անդրանիկի հայրենիքից հեռանալուն:

Բաքվի Ազգային խորհուրդը, ուր մեծամասնություն էին կազմում դաշնակցականները, նույնպես մերժեց այդ դաշինքը, մանավանդ, որ այն ուներ «խաղաղության և հարատև բարեկամության» անունը կրող վերնագիր: Արդյո՞ք թուրքի հետ հնարավոր էր հաստատել հարատև բարեկամություն:

Արևմտահայ դաշնակիցների պաշտոնաթերթ «Աշխատանքը» գրում է. «Եվ եթե կնքված է հաշտությունը, ստորագրված են պայմանները… ապա ուրեմն գործված է հանցանքներից ամենասևը, դավաճանության ամենասոսկալին, որոնց նմանը հայկական տարեգրության մեջ չէ եղած դեռ» (1918թ. հունիսի 5): Շատերը խորհում էին, թե «դաշնակցականները պարզապես ծախեցին Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի» հաղթանակները:

Հնչակյան մի շարք գործիչներ ևս իրենց բացասական վերաբերմունքը արտահայտեցին Բաթումի պայմանագրի շուրջ:

Պատմաբան Լեոն Հայաստանին մնացած այդ ողորմելի տարածքը իրավմամբ համարել է ոչ թե հայ ժողովրդի բնակության տեղ, այլ գերեզման:

Խորհրդային ժամանակաշրջանի պատմագրության մեջ Բաթումի պայմանագիրը գնահատված է միանշանակորեն՝ ընդգծված նրա հակախորհրդային ուղղվածությունը: Խորհրդային պատմագրության մեջ լուրջ քննարկման հարց դարձավ Ալ. Խատիսյանի այն

արտահայտությունը, որ «Եթե չլիներ սուլթանը, չէր լինի նաև ազատ Հայաստանը» (Ծ.Պ. Աղայան «Հայ ժողովրդի պատմության նկարագրդ ակնարկներ»): Հեգնանքի առարկա այսպես կոչված «Ազատ Հայաստանը» վերածվեց պանթուրքիզմի ծրագրերին նպաստող գործարքի:

Եթե փորձենք խորանալ դաշնակցական մի շարք գործիչների վարվելակերպի մեջ, ապա այստեղ ևս կա ճշմարտություն: Ճիշտ է, պայմանագիրը ծանրագույն էր հայ ժողովրդի համար, բայց գոնե քաղաքական ձևակերպում էր տալիս հինգ դար պետականություն չունեցող երկրին: Արդեն պետականություն վերագտած երկիրը ունեցավ իր դրոշը, հիմնը, բանակը, թեկուզ և փոքրաքանակ: Որքան էլ փառաբանված է մեր հայդուկապետ Անդրանիկը, այնուհանդերձ չեմ հավանում նրա հայրենիքից հեռանալու փաստը, չէ՞ որ այդ պահին վճռվում էր հայ ժողովրդի ճակատագիրը: Չմոռանանք նաև, որ Առաջին Հանրապետության հիմքի վրա ձևավորվեց այսօրվա Հայաստանի Հանրապետությունը (Երրորդ), տվեց իր խորհրդանիշները:

Այսօր դժվար է լիովին իրական գնահատական տալ կատարվածին: Հայոց պետական գործիչները արել են այն, ինչ կարողացել են, անկախ նրանից ճիշտ է, թե սխալ:

Եզրակացության բաժնում կներկայացնեմ իմ սեփական կարծիքը:

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը՝ կարելի է կատարել մի շարք եզրակացություններ:

«Խաղաղության և հարատև բարեկամության» անունը կրող չարաբաստիկ պայմանագիրը պարտադրված ակտ էր ռազմական գերակշռություն ունեցող Թուրքիայի կողմից և արտագրվել էր Անդրկովկասում թուրքերի հարձակման պայմաններում: Ի՞նչ բարեկամության մասին էր խոսք գնում, այն բարեկամության, որով մեզ տրվեց ընդամենը 12 հազար քառակուսի կիլոմետր տարածք ապրելու համար: Ի՞նչ եք կարծում մեզ պիտի օգներ մի պետություն, որը պայմանագրից ընդամենը երեք տարի առաջ իրականացրել էր հայերի ցեղասպանությունը և ոչնչացրել մեկ ու կես միլիոն մարդ:

Բայց, մյուս կողմից, ճակատագրի հեգնանքով, սա անկախ Հայաստանի առաջին միջազգային փաստաթուղթն էր, որով Թուրքիան առաջինը ճանաչեց Հայաստանի անկախությունը: Ալ. Խատիսյանը, ամփոփելով հայ-թուրքական բանակցությունների արդյունքները, իր ուղարկած նամակում գրում էր. «Մենք կբերենք վատ հաշըության պայմանագիր, բայց կբերենք նաև անկախ Հայաստան, տուն, բույն, որտեղ կռվում է ժողովրդական միտքը: Այս բոլորը կկապի, կմիավորի կբարձրացնի ոգին, իսկ դա կարևոր է: Ես հավատում եմ մեր պետությանը»:

Անձամբ ես՝ Հ. Սարգսյանս հակված եմ կարծելու, որ ստեղծված բարդ իրավիճակում պայմանագրի ստորագրումը միակ ելքն էր նորահռչակ անկախությունը պահպանելու համար, չէ՞ որ մահացու վտանգը արևելահայության գլխից լիովին չէր վերացել և անհրաժեշտ էր կնքել պայմանագիր և փոքր-ինչ դադար առնել:

Ինչպես նշել էի ներածական բաժնում թռոջուցիկ անդրադարձ կկատարեմ կապելով Բաթումի պայմանագիրը Սևրի և Ալեքսանդրապոլի պայմանագրերի հետ:

1920թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագիրը և Վելսոնյան Հայաստանը մեզ խոստանում էր 160 հազար քառակուսի կիլոմետր տարածքով երկիր, երբ իրական Հայաստանը նույն այդ շրջանում՝ 1920-ի աշնանը, խեղդվում և արյունաքամ էր լինում բոլշևիկ-քեմալականների հարվածների տակ: Կամ ոչ պակաս ծանրագույն էր 1920թ-ի դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը ստորագրված Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որով ստիպեցին հրաժարվել Սևրի դաշնագրից, Թուրքիային անցավ Կարսի մարզը, Սուրմալուի գավառը և Նախիջևանի հովանավորությունը:

Այնպես, որ Բաթումի պայմանագրից ամաչել պետք չէ: Պայմանագրի կնքումը իրավիճակը թելադրող գործողություն է եղել, անկախ Հայաստանի առաջին միջազգային փաստաթուղթը, որը բարեբախտաբար, չի վավերացվել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ

Թուրքիայի կառավարությունների կողմից և իր ուժը պահպանեց մինչև համաշխարհային պատերազմի ավարտը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սիմոնյան Հր.

   Հայոց պատմության հիմնահարցեր հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Եր.: Զանգակ 97, 2000-488 էջ:
2. Հայ ժողովրդի պատմություն, 1 հատոր
3. Վրացյան Ս., Խորհրդային Հայաստան
4. Խատիսյան Ա., Խորհրդային Հայաստան
5. http://www.aha.am/index.php?lang=arm&s=armenia
6. Ծ. Պ. Աղայան

   «Հայ ժողովրդի պատմության նկարագրդ ակնարկներ»